«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ՊՈՍ (POS) տերմինալների ակտիվացման ծառայություն

Տեղեկատվական ամփոփագիր

Թարմացվել է 23.04.2026թ.

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) առևտրի և սպասարկման ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատերերին առաջարկում է առևտրի և սպասարկման կետերի (այսուհետ՝ ԱՍԿ) կողմից, այդ թվում՝ առցանց, վճարային քարտերը որպես վճարման միջոց ընդունելու ծառայությունների մատուցում՝ հետևյալ պայմաններով.

Սպասարկման միջոցների տրամադրման և անկանխիկ գործարքների դիմաց Բանկի կողմից գանձվող միջնորդավճարներ և շրջանառության նվազագույն չեմեր			
ՊՈՍ[1] և ՀԴՄ-ՊՈՍ[2] տերմինալներով՝ ՀՀ ԿԲ խորհրդի 09.02.2026թ. թիվ 27-Ն որոշման 1-ին կետով սահմանված՝ համապատասխան վաճառակետի տեսակի կոդ (Merchant category code) և մինչև 150 մլն. ՀՀ դրամ տարեկան իրացման շրջանառություն ունեցող անձանց ցանկում ընդգրկված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար			
ՀԴՄ-ՊՈՍ տերմինալի տրամադրման վճար կամ առաջին երկու տարվա ընթացքում ծառայության դադարեցման տուգանք[3]			50,000 ՀՀ դրամ
Գործարքի միջնորդավճար[4]	Արքա քարտերով կատարված		0.5%
	Visa, Mastercard տեղական քարտերով կատարված		0.9%
	UnionPay տեղական քարտերով կատարված		2.0%
	Visa, Mastercard, UnionPay արտասահմանյան քարտերով կատարված		2.7%
Ամսական սպասարկման վճար[4]	Երևան քաղաքում գործող ԱՍԿ		4,600 ՀՀ դրամ
	ՀՀ մարզերի քաղաքներում գործող ԱՍԿ		3,000 ՀՀ դրամ
	ՀՀ գյուղերում գործող ԱՍԿ		1,000 ՀՀ դրամ
V-POS[5], C-POS[6], C-PAY[7]-ով և վերը չներառված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար ՊՈՍ և ՀԴՄ-ՊՈՍ տերմինալներով			
Գործարքի միջնորդավճար[8]	Արքա քարտերով կատարված		1.5%
	Visa, Mastercard տեղական քարտերով կատարված		2.3%
	UnionPay տեղական քարտերով կատարված		2.0%
	Visa, Mastercard, UnionPay արտասահմանյան քարտերով կատարված		3%
Տրամադրման, սպասարկման և դադարեցման վճար[8]	**ՀԴՄ-ՊՈՍ** տերմինալով իրականացված ամսական շրջանառությունը մինչև 100,000 ՀՀ դրամ կազմելու դեպքում	տրամադրման վճար	50,000 ՀՀ դրամ
		ամսական սպասարկման վճար (ներառյալ հարկերը)	1,000 ՀՀ դրամ
	ՀԴՄ-ՊՈՍ տերմինալով իրականացված ամսական շրջանառությունը 300,000 ՀՀ դրամ կազմելու դեպքում	ամսական սպասարկման վճար (ներառյալ հարկերը)	3,000 ՀՀ դրամ
		առաջին 2 տարվա ընթացքում ծառայության դադարեցման տուգանք	50,000 ՀՀ դրամ
	ՊՈՍ տերմինալով (առանձին սարք + ՀԴՄ կամ առանձին սարք, որը տրամադրվում է Բանկի կողմից) իրականացված ամսական շրջանառությունը մինչև 600,000 ՀՀ դրամ կազմելու դեպքում՝ ամսական սպասարկման վճար (ներառյալ հարկերը)		6,000 ՀՀ դրամ
	Առանձին համագործակցությունների դեպքում Բանկի կողմից տրամադրված **ՊՈՍ** տերմինալով (առանձին սարք) իրականացված ամսական շրջանառությունը մինչև 2,000,000 ՀՀ դրամ կազմելու դեպքում՝ ամսական սպասարկման վճար (ներառյալ հարկերը)		մինչև 20,000 ՀՀ դրամ[3]
	ՀԴՄ-ՊՈՍ տերմինալով համագործակցության դադարեցման պահին 5,000,000 շրջանառություն չապահովելու դեպքում՝ տուգանք (ներառյալ հարկերը)		50,000 ՀՀ դրամ
Հաշվին չնվազող մնացորդ[3, 9]			մինչև 150,000 ՀՀ դրամ
Նոր կետի գրանցում[3]			4,000 ՀՀ դրամ
Տերմինալների նպատակային հաշվի բացման և վարման սակագին			0 ՀՀ դրամ
Տերմինալի նպատակային հաշվից կանխիկի տրամադրում[10]			0%
Իրավաբանական անձի տվյալների փոփոխություն			2,000 ՀՀ դրամ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք կապ հաստատել Բանկի հետ:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից

Իրավաբանական անձի փոփոխություն	2,000 ՀՀ դրամ
Տերմինալների շտապ[11] գրանցում	6,000 ՀՀ դրամ

Ծանոթագրություններ

[1]ԱՍԿ-ներում բանկերին պատկանող և բանկերի կողմից տեղադրվող հատուկ սարքավորում՝ քարտով վճարում ընդունելու նպատակով:

[2]Կազմակերպությանը պատկանող նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենայում քարտով վճարում ընդունելու նպատակով ներբեռնված ծրագիր:

[3]Կիրառվում է՝ ելնելով գործարքների ծավալից, գործունեության բնույթից և առանձնահատկություններից, համագործակցության պայմաններից:

*[4]**ՊՈՍ** և **ՀԴՄ-ՊՈՍ** տերմինալներով կատարված գործարքների ամսական մինչև 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր շրջանառություն ունեցող ԱՍԿ-ների համար Գործարքի միջնորդավճարի և Ամսական սպասարկման վճարի հանրագումարը չի կարող գերազանցել սույն բաժնում ներկայացված Ամսական սպասարկման վճարի համար սահմանված արժեքները:*

*[5]Առցանց սպասարկման միջոցներ՝ ինտերնետ-խանութ/հավելված/ծրագրային միջոց, **C-PAY**:*

[6]Android օպերացիոն համակարգով աշխատող խելացի սարքավորում/սմարթֆոն, որի վրա ակտիվացված է հավելված, որով ապահովվում է անհպում տեխնոլոգիաներով քարտերի սպասարկում:

[7]Բանկի կողմից տրամադրվող հավելված՝ QR կոդ և վճարման հարցումների հղում գեներացնելու հնարավորությամբ:

[8]Հաշվի առնելով գործունեության բնույթը, կանխատեսվող գործարքների ծավալը, կազմակերպության հետ համագործակցության հեռանկարները, նաև այլ պայմաններ՝ հաճախորդի համաձայնությամբ, պայմանագրային հիմունքներով, կարող են սահմանվել աղյուսակում ներկայացվածից տարբերվող սակագներ:

*[9]**ՊՈՍ** կամ **ՀԴՄ-ՊՈՍ** տերմինալով հետվճարի (refund) կամ ձեռքով մուտք (k-enter) ծառայության անհատական դիմումը բավարարելու պարագայում կարող է սահմանվել այլ սակագին:*

[10]Մասնաճյուղերից 5 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումար կանխիկացնելու դեպքում հաճախորդը պետք է մեկ օր առաջ ներկայացնի համապատասխան հայտ:

[11]Պայմանագրի ստորագրումից հետո՝ 2 բանկային օրվա ընթացքում:

Առցանց սպասարկման միջոցներն ապահովում են էլեկտրոնային վճարումների առցանց ընդունման անվտանգության 3D Secure ստանդարտներ (verified by Visa, Mastercard Secure Code):

Հայտերի ընդունման ուղիներ

- Կայքէջ՝ նախատեսված է Բանկի ինչպես գործող հաճախորդների, այնպես էլ ոչ հաճախորդների համար:
- Բանկի հեռահար համակարգեր՝ ՀԾ - Ինտերնետ Բանկ, Մոբայլ Բանկ, որոնք նախատեսված են տվյալ համակարգերից օգտվող Բանկի նույնականացված հաճախորդների համար:
- Բանկի գործող հաճախորդները և հաճախորդ չհանդիսացող անձինք կարող են դիմել նաև Բանկի տարածքային ստորաբաժանումներ:

Ծառայության ընտրություն

Հայտատուի լիարժեք նույնականացումից հետո իրականացվում է սպասարկման միջոցի ընտրություն.

- ՊՈՍ տերմինալ,
- ՀԴՄ-ՊՈՍ տերմինալ,
- C-POS,
- Առցանց սպասարկման միջոցներ,
- Արդեն մատուցվող ծառայությունների պայմաններում փոփոխությունների իրականացում:

Հայտերի դիտարկման և ծառայությունների տրամադրման ժամկետներ

Ներկայացված հայտերի վերաբերյալ որոշումը կայացվում է մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ծառայության տրամադրումը՝ պայմանագրի կնքումից հետո մինչև 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ կախված ծառայության տեսակից և շեղումների առկայությունից:

Հայտի, այդ թվում՝ շեղումներով, հաստատման դեպքում, սահմանվում են վերջնականացված պայմանները և ներկայացվում դիմող ընկերության հաստատմանը:

Գրավոր ներկայացված հայտի մերժման դեպքում դիմող ընկերության՝ հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվում է տեղեկացում:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

- Ծառայության տրամադրման հայտ՝ պարտադիր դաշտերի ճիշտ լրացումով.

  - ✓ Ընկերության տնօրենի ՀԾՀ
  - ✓ Կոնտակտային անձ
  - ✓ Հեռախոսահամար
  - ✓ Էլ. փոստի հասցե
  - ✓ ՀՎՀՀ

- *Հայտատուի ոչ հաշվետեր հաճախորդ լինելու դեպքում՝ հետագայում կպահանջվեն հաշիվների բացման և վարման համար անհրաժեշտ փաստաթղթերը։*
  Ցանկին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ ***https://conversebank.am/hy/open-account****։*

Գործարքների կասեցում

Եթե գործարքը միանշանակորեն համապատասխանում է զեղծարարության (fraud) չափանիշներին, ապա Բանկի կողմից կարող է անմիջապես կասեցվել գործարքների հավաստագրումը։

Բանկը ԱՍԿ-ից կարող է պահանջել կատարված գործարքների հիմքերը, անհրաժեշտության դեպքում կատարելով այց՝ գործարքների պատմությունը պարզելու։

Արտասովոր գործարքների դեպքում Բանկը կարող է այդ գործարքների չափով սառեցնել ընկերության հաշվին առկա գումարները՝ ընկերությունից պահանջելով պարզաբանումներ։

Ոչ բավարար պարզաբանումների կամ հիմքերի դեպքում սպասարկման միջոցների աշխատանքը կարող է ժամանակավորապես կասեցվել։

ԱՍԿ-ի կողմից անհամապատասխանությունների վերացման դեպքում համագործակցությունը կշարունակվի և հաշվը կապասառեցվի, հակառակ դեպքում պայմանագիրը կդադարեցվի։

ԱՍԿ-ի փակում համակարգում

ԱՍԿ-ն կարող է փակվել հետևյալ դեպքերում.

- Ընկերության կողմից ներկայացված փակման դիմումի համաձայն,
- Բանկի նախաձեռնությամբ մեկ ամիս առաջ ընկերությանը գրավոր տեղեկացնելուց հետո,
- Բացառապես Բանկի կողմից մեկօրյա ժամկետում, եթե վճարահաշվարկային համակարգերի կողմից ստացել է զգուշացում ընկերության կողմից վճարահաշվարկային համակարգերի կանոններով սահմանված զեղծարարական գործարքների շեմը գերազանցելու մասին,
- Բացառապես Բանկի կողմից մեկօրյա ժամկետում, եթե Բանկն ունի բավարար ապացույցներ ընկերության կողմից իրականացված ապօրինի գործողությունների կամ Պայմաններով և պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման վերաբերյալ։
- Նաև պայմանագրով սահմանված այլ դեպքերում։

Ուշադրություն
Բանկի կողմից ինտերնետային կայքերում վճարային քարտերը որպես վճարման միջոց ընդունելու ծառայությունը չի տրամադրվում ընկերությանը և/կամ ԱՍԿ-ին, եթե վերջինիս գործունեությունը մասամբ կամ ամբողջովին կարող է դիտարկվել որպես հանցավոր, անօրինական և/կամ չհամապատասխանել ԱրԲա լոկալ, UnionPay, VISA և Mastercard միջազգային վճարահաշվարկային համակարգերի, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին իրավական կամ էթիկայի տեսանկյունից։ Բացի այդ, նկարագրված տեղեկության բացահայտման դեպքում՝ անմիջապես կկասեցվի նման կազմակերպությունների հետ համագործակցությունը։
Ընկերության կամ վերջինիս հետ փոխկապակցված անձ/ի/անց գործունեության տեսակի, վաճառվող ապրանքների և/կամ մատուցվող ծառայությունների տեսականու փոփոխության դեպքում ընկերության լիազոր անձը պետք է Բանկին գրավոր տեղեկացնի փոփոխությունների վերաբերյալ՝ էլեկտրոնային նամակով՝ կից ներկայացնելով փոփոխված ապրանքների տեսականու, մատուցվող ծառայությունների և/կամ փոփոխված գործունեության ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն։

«Սակագներ և դրույքներով» նախատեսված վճարներն առաջնահերթության կարգով գանձվում են տվյալ արժույթով կամ ՀՀ դրամով հաշիվներից, իսկ դրանց բացակայության դեպքում գանձումները կարող են կատարվել այլ արժույթով հաշիվներից՝ գանձման օրվա դրությամբ համապատասխան արժույթի համար նախատեսված ՀՀ ԿԲ փոխարժեքով:

Բանկն իրավասու է փոփոխել և լրացնել «Սակագներ և դրույքները»՝ պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով այդ մասին հաճախորդներին՝ սեփական ինտերնետային էջում (www.conversebank.am) հաղորդագրություն հրապարակելով, Բանկի տարածքում հայտարարություններ փակցնելու միջոցով, էլ. փոստով ծանուցումն ուղարկելով և/կամ հաճախորդի կողմից ընտրված Բանկի կողմից առաջարկվող այլ եղանակներով տրամադրելու միջոցով, որը համարվում է հաճախորդի պատշաճ իրազեկում:

Բանկը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է հաճախորդից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ հաճախորդին:

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ կառավարության հետ կնքած համաձայնագրի պայմաններին համապատասխան, Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, Բանկը կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Առանձին դեպքերում, հիմնվելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) և թղթակից բանկերի պահանջների վրա, Բանկը կարող է սահմանափակել և/կամ չիրականացնել ծառայության մատուցումը:

Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կամ օրենքով սահմանված կարգով այլ իրավասու մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Առանց հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Դրանք արտացոլվում են հաճախորդի բանկային հաշիվների քաղվածքներում, որոնք Բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված կարգով տրամադրվում են հաճախորդին:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է՝ հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:

Բացի այդ, պայմանագրի գործողության ընթացքում, էլեկտրոնային կապի միջոցով կամ Ձեր ընտրությամբ՝ այլ եղանակով (օրինակ՝ փոստային կապ, Բանկի տարածքում՝ առձեռն, և այլն), Բանկը Ձեզ կտրամադրի ծառայության ընդհանուր պայմանների և այլ վճարների, հաղորդակցման կարգի, պայմանագրից բխող իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության վրա ուղղակի ազդեցություն ունեցող իրավական ակտերի և այլ հանգամանքների փոփոխության մասին:

Փաստաթղթերի տրամադրում առձեռն՝ Բանկի տարածքում (ներառյալ ԱԱՀ)	
Հաշվի քաղվածք, հաշվի շարժի վերաբերյալ տեղեկատվություն[1, 2]	✓ Մեկ անգամ (անկախ պարբերականությունից)՝ 0 ՀՀ դրամ ✓ Կրկնօրինակի դեպքում՝ - Մինչև 1 ամիս վաղեմության՝ 1,800 ՀՀ դրամ - 2 ամսից մինչև 1 տարի վաղեմության՝ 3,000 ՀՀ դրամ - 1 տարուց մինչև 3 տարի վաղեմության՝ 12,000 ՀՀ դրամ - 3 տարի և ավելի վաղեմության՝ 24,000 ՀՀ դրամ (Բանկում պահպանված լինելու դեպքում)
Կատարված գործարքների վերաբերյալ տեղեկանքներ/գրություններ	
Մինչև 1 ամիս վաղեմություն ունեցող	3 000 ՀՀ դրամ
1 ամսից ավելի վաղեմություն ունեցող	5 000 ՀՀ դրամ
Փաստաթղթերի, գործարքի կատարման հիմքերի և փաստաթղթերի պատճեններ (յուրաքանչյուր փաստաթղթի համար)	
Մինչև 1 ամիս վաղեմություն ունեցող	1 800 ՀՀ դրամ
Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող	3 000 ՀՀ դրամ
Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող	12 000 ՀՀ դրամ

Փաստաթղթերի, քաղվածքների կամ այլ փաստաթղթերի առաքում (ներառյալ ԱԱՀ)		
Ներհանրապետական		500 ՀՀ դրամ
Միջազգային		
Օրենքով և պայմանագրով սահմանված լինելու դեպքում		Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին
Այլ դեպքերում	Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին + 1,500 ՀՀ դրամ	
Պատվիրակված առաքման ծառայության միջոցով		
Ներհանրապետական	3,000 ՀՀ դրամ	
Միջազգային	Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին + 5,000 ՀՀ դրամ	
Ծանոթագրություններ		
[1] Նույն հաճախորդին տեղեկանքի և քաղվածքի միաժամանակյա տրամադրման և տեղեկանքի դիմաց գանձում նախատեսված լինելու դեպքում գանձումը կատարվում է միայն տեղեկանքի դիմաց:		
[2] Ներդրումային դեպարտամենտի կողմից սպասարկվող իրավաբանական անձ հաճախորդների համար սակագինը սահմանվում է 0 ՀՀ դրամ:		

Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին (Կիրառելի է անհատ ձեռնարկատերերի դեպքում)

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

Ավանդի արժութային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		16 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ		7 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Խորենացի 15 («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն)
Հեռախոս՝ +374 10 583514

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Ծանուցում ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15
«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ
Հեռախոս՝ (+ 37460) 70 11 11
Ֆաքս՝ (+ 37410) 58 24 21
Էլ. հասցե՝ info@fsm.am

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի **https://www.conversebank.am** ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
  WhatsApp՝ +374 95 511211
  Skype՝ conversebank-callcenter